ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ՈՐՆ ԷԼՔԸ

Ձնալած «վերևների» հավաստիացումներին և կենտրոնական հեռուստատեսության ու մամուլի ստահոդ լուրերին, շարունակվում է Ադրբեջանի կողմից մեր հանրապետություն մտնող երկաթգծի շրջափակումը: Ամեն օր Երևան պետք է մտնի միջին հաշվով 12—14 գնացք, բայց...

— Դեկտեմբերի սկզբից մինչև հիմա «Երևան» կայարան է հասել ընդամենը 4 գնացք,— ասում է կայարանի կուսքյուրոյի քարտուղար Ն. Տեր-Գարապետյանը,— որպեսզի պատկերն ավելի պարզ լինի, ասեմ, որ դրանցից մեկը գրանցված է ամսի 4-ի, մեկը՝ 10-ի և երկուսը՝ 11-ի հաշվին: Այսինքն՝ Ադրբեջանի ժողովրդական ճակատի լիդերները գիծը ինչ-որ պահ բացում են այն ժամանակ, երբ կենտրոնից պետք է հայտարարվի, թե շրջափակումը վերացված է: Այն տպավորությունն է ստեղծվում, թե կենտրոնի ու ադրբեջանական ժողովրդական ճակատի միջև ինչ-որ ներքին պայմանավորվածություն կա:

Այսպես, թե այնպես, շրջափակման փաստն առկա է: Եվ դա արտահայտվում է ոչ միայն Հայաստան մուտք գործող վագոնների ու գնացքների թվի նվազեցմամբ, այլև հանրապետության ժողովրդական տնտեսության աշխատանքային ռիթմի անկմամբ: Նորից ձեռնարկություններից սկսել են ստացվել ահազանգեր՝ հումքի մատակարարման պատճառով արտադրությունը կանգնելու վտանգի տակ է, նորից աղետի գոտին սկսել է հնչեցնել տագնապի կոչնակը, հերթեր են գոյանում բենզալիցքավորման կայաններում, դատարկվում են խանութների վաճառասեղանները:

Ի՞նչ անել. այս հարցն այսօր առավել, քան երբևէ գործնական պատասխան է պահանջում, քանի որ բոլորս համոզվել ու համոզվում ենք, որ մեր հարևան «եղբայրական» հանրապետության ժողովրդական հակատի լիդերները պատրաստ են ամեն պահ գործողության մեջ դնել անբարոյականության իրենց հարազատ զենքը: Կենտրոնը մեկ իր լուռ անտարբերությամբ, մեկ էլ սխալ հայտարարություններով, կամա, թե ակամա, հովանավորում է մի հանրապետության կողմից մյուսի շրջափակումը:

— Եղբը մեկն է՝ մեկընդմիշտ հրաժարվել ադրբեջանական երկաթուղու ծառայություններից, դրա հետ այլևս հույսեր չկապել, արագորեն լուծել այլ տարածքներով երկաթգիծ անցկացնելու հարցը և երկաթուղային բոլոր փոխադրումները իրականացնել այդ ճանապարհով,— ասում է Ն. Տեր-Գարապետյանը:

Սա հայկական երկաթուղում (և ոչ միայն այստեղ) արդեն արմատացած կարծիք է, այն մարդկանց կարծիքը, որոնք գործի բերումով ստիպված են հաճախակի «բանակցությունների» մեջ մտնել ադրբեջանական կողմի հետ՝ գնացքների փոխանակման գործը կարգավորելու նպատակով, և համոզվել են, թե ինչքան անհուսալի բան է դա:

Այո՛, ժամանակն է դժգոհելու ու բողոքելու փոխարեն (որովհետև դրանց արձագանքող չկա) վճռական ու գործնական քայլերի դիմել, լուծել հանրապետությունը երկրի մյուս շրջանների հետ կապող հուսալի երկաթուղի անցկացնելու հարցը:

Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ